ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1959 Общественные науки

Ա. Մ. Եղիազարյան

ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախասովետական հայ գրականությունը համեմատաբար աղքատ է եղել տնտեսական բնույթ կրող գիտական հետազոտություններով, ուսումնասիրություններով։

Անշուշտ այս երևույթն ունի իր պատճառները։ Մեր ժողովուրդը շատ վաղուց զրկվել է իր պետականությունից և, բացի սեփական շահագործողներից, դարեր շարունակ տառապել և կեղեքվել է ֆեոդալական-բռնապետական օտար լծի տակ։

Աշխատավոր ժողովուրդը, դարերի ընթացքում ենթարկվելով արհավիրքների, չունենալով անձի և ունեցվածքի տարրական ապահովություն, գտնվելով ասիական դեսպոտական ռեժիմի լծի ներքո, ի վիճակի չէր ծավալելու, զարգացնելու տնտեսագիտական միտքը։

Արմատական շրջադարձ է տեղի ունենում 1828 թ. Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո։ Խոշոր փոփոխություններ են տեղի ունենում Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական կյանքում, քաղաքներում, գյուղերում։

Այդ փոփոխությունները, դրանց հաջորդած հետևանքները, կապիտալիզմի առաջացման ու ծավալման իրադրությունը, բացվող հեռանկարները անխուսափելիորեն զարկ տվին տնտեսագիտական մտքի տարբեր ձևերի արտահայտությունների զարգացմանը։

Ահա այդ շրջանումն է, որ հայ իրականության մեջ սկսում են երևան գալ ոչ միայն հետազոտական աշխատություններ, այլև առանձին մենագրություններ տնտեսագիտական խնդիրների շուրջը։

Ինչ խոսք, որ հայ տնտեսագիտական ինքնուրույն միտքն ու գրականությունն ուժեղ թափ է ստանում 60-ական թվականներից և իր խտացած արտահայտությունն է գտնում Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը, որպես ուղիղ ճանապարհ» աշխատության և նրա հարուցած արձագանքների մեջ։

70-ական թվականներին հանդես է գալիս Գրիգոր Արծրունին՝ Անդրկովկասի և Թուրքահայաստանի տնտեսական կյանքին նվիրված բազմաթիվ հոդվածներով, ինչպես նաև մի շարք տնտեսագիտական բնույթ կրող աշխատություններով, 80-ական թվականներին խոշոր հրապարակախոս-տնտեսագետ Ավ. Արասխանյանը, իր մի շարք ինքնատիպ տնտեսագիտական հետազոտություններով («Ազգաբնակությունը և ազգաբնակության շարժումները», 1883 թ., «Հողի արդյունաբերությունը և հասարակությունը», 1884 թ.)։

Այդ շրջանին են պատկանում հայ լեգալ նարոդնիկների տնտեսագիտական գրվածքները, որոնցից հիշատակման արժանի են Հովսեփ Տեր-Հովսե-

փյանի, Ղորղանյանի, Հրաչյայի, Ա. Ամիրյանի, Լ. Սարգսյանի հոդվածները «Մեղու Հայաստանի»-ում, «Ս շակ»-ում և «Գործ»-ում։

Հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ իրենց պատշաճ տեղն են գրավում անհիմն ու անարդարացի կերպով մոռացության տրված 80—90-ական թվականների այն գործիչները, որոնք պայքարել են հայ լեգալ նարոդնիկների տնտեսագիտական կոնցեպցիաների դեմ։

90-ական թվականներից հրապարակ են գալիս ագրարային մանրբուրժուական և բուրժուական տարբեր քաղաքական կուսակցությունների տնտեսական հրապարակախոսները։

Այդ նույն շրջանում, և հատկապես XX դարի սկզբներին հանդես են գալիս հայ մարքսիստ-լենինյան հրապարակախոսներ - տնտեսագետները՝ իրենց խոր ուսումնասիրություններով, որոնք վերաբերում են ժամանակակից տնտեսական կյանքի հարուցած պրոբլեմներին և նրանց լուծմանը։

Ակներև է, սակայն, որ մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը հայ իրականության մեջ հրապարակի վրա եղել են լավագույն դեպքում առանձին տնտեսագիտական բնույթի մենագրություններ, սակայն հայ տնտեսագիտական մտքի պատմության վերաբերյալ ոչ մի աշխատություն չի եղել։

Հասարակագիտության այս ճյուղը—հայ տնտեսագիտական մտքի պատմությունը—իրավամբ պետք է համարել Հայաստանի սովետական շրջանի ծնունդ։

Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրմանը երկար տարիներ են նվիրել երկու սովետահայ գիտնականներ՝ տնտեսագիտական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ս. Զուրաբյանը և պրոֆեսոր Խ. Գուլանյանը։ Այդ ուսումնասիրությունների արդյունքներն են՝ 1955 թ. Մոսկվայում ռուսերեն լեզվով լույս տեսած Խ. Գուլանյանի „Очерки истории армянской экономической мысли XIX века“ և դոկտոր-պրոֆեսոր Ս. Զուրաբյանի «Հայ տնտեսագիտական մտքի պատմությունը 19-րդ դարում» հայերեն աշխատությունը, որը լույս կտեսնի մոտիկ ապագայում։

Սրանք առաջին ամբողջական աշխատություններ են՝ նվիրված հայ տնտեսագիտական մտքի պատմությանը։

Չպետք է աչքաթող անել մի կարևոր հանգամանք ևս։ Գիտության ամեն մի բնագավառի առաջացմանը նպաստում են որոշ նախադրյալներ, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնվեն։

Ի՞նչ նախադրյալներ կային մեզ մոտ հայ տնտեսագիտական մտքի պատմությունը ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ։

Առաջին նախադրյալը դա Հայաստանի տնտեսական զարգացման, նրա ժողովրդական տնտեսության պատմությանը նվիրված և հրապարակված սովետահայ մարքսիստ գիտնականների աշխատություններն են։ 1954 և 1956 թթ. Երևանում լույս է տեսնում պրոֆ. Հ. Թումանյանի «Հայաստանի տնտեսական զարգացումը» երկու հատորանոց աշխատությունը, որն ընդգրկում է XIX դարի սկզբից մինչև մեր օրերի ժամանակաշրջանը։ 1957 թ. հրապարակվեց տնտեսագիտական գիտությունների թեկնածու Մ. Ադոնցի աշխատությունը՝ «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը»։ Գրվել են նաև մի շարք մենագրություններ՝ նվիրված Հայաստանի տնտեսական զարգացման այս կամ այն շրջանին։

Հիշատակության արժանի են հետևյալ աշխատությունները. պրոֆ. Վ. Ռշտունու «Հայ հասարակական հոսանքների պատմությունը», ինչպես նաև նույն հեղինակի «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում», պատմական գիտությունների դոկտոր Մ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակներ Անդրկովկասում» և «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.», Վ. Պարսամյանի «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում», տնտեսագիտական գիտությունների դոկտոր Ա. Մարուխյանի «Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում» և «Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար», պատմական գիտությունների դոկտոր Ծ. Ադայանի «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», ինչպես նաև «Գյուղական ռեֆորմը Ադրբեջանում», ակադեմիկոս Ա. Կարինյանի «Այնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», պատմական գիտությունների թեկնածու Ֆ. Բարսեղյանի «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմությունը» և այլ ուսումնասիրություններ։

Անշուշտ, հայ տնտեսագիտական մտքի պատմությունը չի հանգում Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմության, կամ Հայաստանի տնտեսական զարգացման պատմության։ Վերջինս տնտեսական «բազիսն» է ուսումնասիրում, մինչդեռ հայ տնտեսագիտական մտքի պատմությունը «վերնաշենքային» գիտություն է, այսինքն ուսումնասիրում է վերջին հաշվով այդ «բազիսից» ծնունդ առած կամ առաջացած տնտեսագիտական գաղափարների, նրանց պայքարի պատմությունը։

Այսպիսով Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմությունը ելակետ է հայ տնտեսագիտական մտքի պատմության համար։

Ահա թե ինչու Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացմանը և պատմությանը նվիրված վերը հիշատակված աշխատությունների դերն ու նշանակությունը չի կարելի թերագնահատել հայ տնտեսագիտական մտքի պատմության ստեղծման ասպարեզում։

Երկրորդ նախադրյալը՝ դա առանձին անտնտեսագետների կամ տնտեսագիտական ուղղություններին նվիրված մենագրություններն են, հրապարակված սովետահայ մարքսիստների կողմից։

Միայն Միքայել Նալբանդյանին նվիրված են տասնյակ աշխատություններ։ Հրապարակված աշխատություններից են պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հովհաննիսյանի երկհատոր «Նալբանդյանը և նրա ժամանակը» կապիտալ գործը, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Վ. Ադուզումցյանի «Միքայել Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները»։

Ս. Շահումյանին են նվիրված բազմաթիվ հետազոտություններ, որոնցից հիշատակենք Վ. Ավետիսյանի, Ֆ. Բարսեղյանի և Վ. Ադուզումցյանի մենագրությունները։ Ս. Սպանդարյանին է նվիրված Վ. Ավետիսյանի մենագրությունը, Ալ. Մյասնիկյանին՝ Ա. Մնացականյանի մենագրությունը, Ասքանազ Մռավյանին՝ Մ. Արզումանյանի աշխատությունը, Բ. Կնունյանցին՝ Ա. Ինճիկյանի աշխատությունը։

Խոշոր վաստակ ունի պրոֆ. Վ. Ռշտունին 80—90-ական թվականների հայ սոցիալ-տնտեսական ուղղությունների ուսումնասիրման բնագավառում, մասնավորապես հայ նարոդնիկների և նարոդնիկության հետազոտման ասպարեզում։ Նրա մենագրություններից նշենք «Հայ նարոդնիկ Հովսեփ Տեր-

Մովսիսյանը» (1946), «Անդրկովկասի կապիտալիստական զարգացման սոցիալիստական քննադատը 19-րդ դ. 80-ական թվականների սկզբին» և այլն։

Եվ վերջապես, երրորդ նախադրյալը՝ դա Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիայում 1953 թ. 29—30 հոկտեմբերին կազմակերպված Անդրկովկասյան խորհրդակցությունն էր, նվիրված անդրկովկասյան ժողովուրդների տնտեսագիտական մտքի զարգացման պատմության հարցերին։ Այդ խորհրդակցությունը, որին մասնակցեցին թե՛ Մոսկվայի և թե՛ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների տնտեսագետները, ճշտեց տնտեսագիտական մտքի պատմության շրջանակները, նրա բովանդակությունը, այդ գիտության աղբյուրները և հայ տնտեսագիտական մտքի պատմության պերիոդիզացիայի ուրվագիծը՝ առաջարկված պրոֆ. Ս. Զուրաբյանի կողմից։

Հայ տնտեսագիտական մտքի պատմությունն ուսումնասիրող ոչ մի հետազոտող չի կարող զանց առնել վերը հիշատակված աշխատությունները, որոնք այդ գիտության հետագա ծավալման և զարգացման անհրաժեշտ նախադրյալներն են հանդիսանում։

Այդ բնավ չի նշանակում, որ վերը թված նախադրյալների առկայությունը վերացրել է բոլոր դժվարությունները, և որ մեր գիտության ուղին արդեն հարթված է, և այն ներկայացնում է լայն ու հարթ պողոտա։ Մ՛չ բոլորովին. դեռ շատ «կնճռոտ» հարցեր կան, որոնք սպասում են մեր տնտեսագետների կողմից մարքսիստական-լենինյան լուսաբանման։ Մեր գիտության որոշ ասպարեզներ դեռ «խոպան» հող են ներկայացնում։

Չնայած դրան՝ հայ տնտեսագիտական մտքի պատմության համար ստեղծված նախադրյալները, սովետահայ գիտնականների գրչին պատկանող տնտեսագիտական հետազոտությունները լուրջ և որոշակի գործոններ են այդ դժվարությունները հաղթահարելու և մեր գիտությունը պատշաճ բարձրության վրա դնելու համար։

* * *

Առաջին հայացքից թվում է, թե մեր գիտության անվանումը ինքնին բացահայտում է իր զբաղմունքի առարկան և կարիք չկա հատուկ քննության նյութ դարձնել այդ հարցը։

Մինչդեռ դա այդպես չէ. մեր գիտության առարկայի սխալ սահմանումը կամ բնորոշումը բերում է շատ հոռի և սխալ հետևություններ մի շարք արմատական հարցերում, առաջին հերթին մեր գիտության պերիոդիզացիայի հարցում, ինչպես նաև «ազդեցությունների» պրոբլեմը լուծելիս։

Դժվար չէ սահմանազատել մեր գիտությունը «հասարակական մտքի պատմության» գիտությունից։ Պարզ է, որ վերջինս ավելի շատ բնագավառներ է ընդգրկում, քան տնտեսագիտական մտքի պատմությունը, որը կազմում է հասարակական մտքի պատմության միայն մի մասը, մեկ բնագավառը։ Նույն հարաբերությունը գոյություն ունի մեր գիտության և «Հայ հասարակական հոսանքների պատմության» միջև։

Որոշ բարդություն է ներկայացնում մեր գիտության և «քաղաքատնտեսության պատմության» հարաբերությունը, կամ մեկի և մյուսի սահմանազատումը։ Այդ հարաբերությունը որոշելու համար անհրաժեշտ է վեր հանել,

թե ի՞նչ ձևեր է ընդունել տնտեսագիտական միտքը քաղաքակիրթ ազգությունների պատմական պրոցեսում։

Պատմությունը ցույց է տալիս, որ եվրոպական ժողովուրդների մեջ տնտեսագիտական միտքը ամենից առաջ հանդես է գալիս որպես եվրոպական պետությունների տնտեսական ձեռնարկումների շարադրանք։ Տնտեսագիտական մտքի մի այլ ձևն էր այդ երկրներում պետությունների կողմից տարվող տնտեսական քաղաքականության սկզբունքների շարադրումը, ուսումնասիրությունը, վերլուծությունը, հիմնավորումը։

Պատմության մեջ գոյություն է ունեցել հիշյալ ձևին սերտորեն կապված՝ տնտեսագիտական մտքի նաև մի ուրիշ ձև, այն է՝ երկրների, ժողովուրդների տնտեսական կյանքի թե՛ արդի դրության, թե՛ հեռանկարների շարադրումը, վերլուծությունը, հետազոտությունը։

Եվ վերջապես, եվրոպական ազգությունները տվել են ժամանակակից կապիտալիստական արտադրական հարաբերությունների կամ տնտեսակարգի տնտեսական վերլուծությունը, այդ հարաբերությունների դրսևորումը տնտեսական կատեգորիաների ձևով, նրանց զարգացման օրինաչափություններն ու տենդենցները, այլ խոսքով, նրանք տվել են տեսական քաղաքատնտեսություն։

Ահա հիմնականում այն ձևերը, որոնց միջոցով դրսևորվել է տնտեսագիտական միտքը պատմականորեն։

Այստեղից էլ պարզ է, որ «քաղաքատնտեսության պատմությունը» ընդգրկում է տնտեսագիտական մտքի վերը հիշատակված ձևերից միայն մեկը—վերջինը, ամենաբարդը։

Մինչդեռ տնտեսագիտական մտքի պատմությունը ավելի լայն շրջանակներ ունի. նա ընդգրկում է տնտեսագիտական մտքի բոլոր ձևերի պատմությունը, ներառյալ և քաղաքատնտեսության պատմությունը։

Վերը տեսանք, որ ժողովրդական տնտեսության պատմության օբյեկտը անմիջականորեն հանդիսանում է ռեալ տնտեսական իրականությունը, տնտեսական հարաբերություններն իրենց պատմական զարգացման մեջ։

Տնտեսագիտական մտքի պատմության օբյեկտը, ինչպես տեսանք, անմիջականորեն տնտեսագիտական գաղափարներն են, որոնք իրենց խտացրած և սիստեմի վերածված արտահայտությունն են գտնում պետության տնտեսական ձեռնարկումների շարադրման մեջ, պետության տնտեսական քաղաքականության հիմնավորման, նրա սկզբունքների վերլուծման մեջ, երկրի տնտեսական արդի դրության կամ հեռանկարների բնորոշման մեջ և, վերջապես, երկրի արտադրակարգի տեսական վերլուծության, օրինաչափությունների, օրենքների սահմանման մեջ։

Ահա թե ինչու տնտեսագիտական մտքի պատմությունը, ի տարբերություն ժողովրդական տնտեսության պատմության, «վերնաշենքային» գիտություն է։

Սակայն դա բնավ չի նշանակում, թե տնտեսագիտական գաղափարները, տնտեսագիտական մտքի արտահայտության բոլոր ձևերը, «վերնաշենքային» բնույթ ունենալով, կտրված են «բազիսից», կապ չունեն «բազիսի» հետ և իրենցից ներկայացնում են ինքնաբավ էություն։

Տնտեսագիտական գաղափարները արդյունք են իրական տնտեսական

հարաբերությունների, տնտեսագիտական գաղափարների ելակետը տնտեսական հարաբերություններն են։

Այսպիսով տնտեսագիտական գաղափարների հիմքը, ելակետը հանդիսանում է էկոնոմիկան, սակայն տնտեսագիտական գաղափարները չեն սահմանափակվում միայն այդ էկոնոմիկան գաղափարապես վերարտադրելով կամ լուսանկարելով։

Ինքը, էկոնոմիկան հակասությունների միասնություն է, և մինչսոցիալիստական հասարակական ֆորմացիաների պատմությունը դա առաջին հերթին դասակարգային հակասությունների, դասակարգային պայքարի պատմություն է։

Ծնունդ առնելով էկոնոմիկայից, տնտեսագիտական գաղափարները իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել էկոնոմիկայի վրա։

Տնտեսագիտական մտքի պատմությունը պետք է դրսևորի թե՛ վերը նշված պայքարը և թե՛ հակազդեցությունը էկոնոմիկայի վրա։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է պարզել մի հարց. օրինաչա՞փ է արդյոք առանձին ժողովուրդների «տնտեսագիտական մտքի պատմության» որպես գիտության ստեղծումը, նրա գոյությունն ու զարգացումը, թե՞ դա արհեստականորեն ստեղծած գիտություն է, այլ խոսքով՝ յուրաքանչյուր ժողովրդի անտեսագիտական մտքի պատմությունը արդյոք ունի՞ իր ինքնագոյությունը, առանձնահատուկ բնույթը։

Օբյեկտիվ պատմական պրոցեսը դրսևորում է մի անհերքելի դրույթ, որ բոլոր ժողովուրդներն հաջորդաբար անցել են, անցնում են հասարակական-տնտեսական ֆորմացիաներ՝ նահապետական շրջան, ստրկություն, ֆեոդալիզմ (ավատականություն), կապիտալիզմ, սոցիալիզմ։ Ամեն մի հասարակական ձև, որով ընթացել է տարբեր ժողովուրդների զարգացումը, ունի իր հիմնական գծերը, որոնք ընդհանուր են այդ ժողովուրդների համար։ Սակայն այդ ընդհանուրը չի բացասում միևնույն հասարակական ձևն ապրող տվյալ ժողովրդի, ազգի առանձնահատկությունները. օրինակ, կապիտալիստական ԱՄՆ-ո և կապիտալիստական Անգլիան, կամ 17-րդ դարի ֆեոդալական Գերմանիան (Պրուսիա) և ֆեոդալական Ռուսաստանը։

Ավելացնենք նաև այն, որ ժողովուրդները միաժամանակ չեն անցնում այդ ֆորմացիաները։

Այստեղից էլ բխում է, որ տնտեսագիտական գաղափարները, տնտեսագիտական մտքի ձևերն էլ ամեն մի ժողովրդի պատմության մեջ դրսևորում են իրենց առանձնահատկությունները, իրենց «ազգային կոլորիտը», իրենց «օրիգինալությունը», իրենց ինքնօրինակությունը։

Ահա այս հանգամանքն է, որ հիմք է տալիս տվյալ ազգի տնտեսագիտական պատմության բնականոն առաջացմանն ու զարգացմանը։

Այս հարցի հետ առնչված է տնտեսագիտական գաղափարների, ազդեցությունների պրոբլեմը և տնտեսագիտական մտքի «ներմուծման» պրոբլեմը։

Ռուս բուրժուական պատմաբաններից ոմանք, բացասելով ռուս ժողովրդի տնտեսագիտական մտքի պատմության օրինաչափությունը, նրա գոյության իրավացիությունը, տնտեսագիտական մտքի զարգացումը Ռուսաստանում բացատրում և հիմնավորում էին միայն օտարերկրյա ազդեցություններով, և ըստ այդ ազդեցությունների աղբյուրների, տնտեսագիտական մտքի պատմությունը հետևյալ դարաշրջանների էին բաժանում. «անգլիական ազ-

դեցության շրջան», «ֆրանսիական ազդեցության շրջան», «գերմանական ազդեցության շրջան»[1]։

Ինչից է բխում այս հոռի, հակագիտական պատմական սխեման, որը լիովին բացասում է ռուս ժողովրդի տնտեսագիտական մտքի պատմության օրիգինալ, ինքնատիպ բնույթը և այդ պատմությունը վերածում է օտարերկրյա տնտեսագիտական գաղափարների, իդեաների, սիստեմների ազդեցությունների պատմության։

Ամբողջ հարցն այն է, որ այդ բուրժուական գիտնականները կտրում են տնտեսագիտական գաղափարները տվյալ ժողովրդի «բաղխից» և այդպիսով բացահայտում զուտ իդեալիստական մոտեցում տնտեսագիտական գաղափարների, սիստեմների աղբյուրի, հիմքի նկատմամբ՝ համարելով բուն իսկ ռուս ժողովրդի մեջ դրսևորված տնտեսագիտական գաղափարը Եվրոպական որևէ երկրի տնտեսագիտական գաղափարի ազդեցության արդյունք։

Պաշտպանելով ամեն մի ժողովրդի տնտեսագիտական մտքի պատմության օրիգինալությունը, նրա ինքնօրինակությունը, նրա raison détre-ը, մենք անշուշտ չենք բացասում օտարերկրյա տնտեսագիտական մտքի տարբեր ձևերի ազդեցությունը տվյալ ժողովրդի տնտեսագիտական մտքի վրա։ Եվ դա շատ դյուրին բացատրվում է նրանով, որ բոլոր ժողովուրդների միևնույն ֆորմացիայի արտադրական-տնտեսական հարաբերությունները իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ ունեն ընդհանուր կողմեր, որոնց շնորհիվ տնտեսագիտական գաղափարները կարող են կամ միաժամանակ առաջանալ տարբեր ժողովուրդների մեջ, կամ թե կարող են ազդեցության արդյունք լինել։

Երկու դեպքում էլ պահանջվում է կոնկրետ պատմական ուսումնասիրություն։

Սակայն ազդեցությունների պրոբլեմը դրանով չի սպառվում։ Ճիշտ և տեղին մերկացնելով բուրժուական կոսմոպոլիտիզմը, ստորաքարշությունը արևմուտքի հանդեպ, ճիշտ քննադատելով մի շարք բուրժուական տնտեսագետների կոնցեպցիաները ռուս ժողովրդի տնտեսագիտական մտքի պատմության իբր թե ոչ օրիգինալ բնույթի մասին, սովետական մի շարք գիտնականներ, մեր կարծիքով, ընկնում են ծայրահեղության մեջ, երբ նրանք առհասարակ բացասում են տնտեսագիտական մտքի կատարյալ ձևի՝ տեսական քաղաքատնտեսության «ներմուծման» հնարավորությունը թե՛ Ռուսաստան, և թե՛ որևէ այլ երկիր՝ որակելով այդ ներմուծման տեսությունը որպես հակամարքսիստական տեսություն։

Ի՞նչ են ասում պատմական փաստերն այդ մասին։

Այս կապակցությամբ տեղին է վերհիշել Կ. Մարքսի վերին աստիճանի ուշագրավ և դիպուկ արտահայտությունը Գերմանիայում առաջ եկած քաղաքատնտեսության մասին։ «Գերմանիայում քաղաքատնտեսությունը մի օտարերկրյա գիտություն է մնացել մինչև այժմ,—գրում է Կ. Մարքսը «Կապիտալ»-ի 1-ին հատորի երկրորդ հրատարակության վերջաբանում։

Ավելին՝ թե՛ 1830-ական թվականներին, երբ Գերմանիան դեռ չէր թևակոխել կապիտալիզմի զարգացման շրջանը և թե՛ 1848—49 թթ. հետո, երբ նա ընթացավ կապիտալիզմի ուղիով՝ այլ խոսքով, ամբողջ տասնիններորդ

[1] Տե՛ս „История русской экономической мысли", т. I, Москва, 1955, стр. 14.

դարում «գերմանացիները մնացին արտասահմանի սոսկ աշակերտներ, երկրորդագուներ և ընդօրինակողներ, օտարերկրյա խոշոր ֆիրմաների արտադրանքների մանրավաճառներ»[2]։

Ինչո՞վ էր պայմանավորված այս երևույթը։ Մարքսը դա բացատրում է «գերմանական հասարակության պատմական զարգացման առանձնահատկություններով»։

Որո՞նք են այդ առանձնահատկությունները։

Անգլիայի և անգամ Ֆրանսիայի համեմատությամբ, Գերմանիան ուշ մտավ կապիտալիզմի զարգացման փուլը։ Արտադրության կապիտալիստական եղանակն սկսեց արագորեն զարգանալ Գերմանիայում 1848 թ. հետո։ Մինչև այդ Գերմանիան ներկայացնում էր «մանրբուրժուական աշխարհ»։ Եվ «այսպիսով,—նշում է Մարքսը,— պակասում էր կենսատու հողը քաղաքատնտեսության համար»։ Մինչդեռ, թե՛ Անգլիայում և թե՛ Ֆրանսիայում այդ ժամանակ տեսական քաղաքականությունը դեռևս գտնվում էր որոշ չափով գիտական բարձրության վրա։ Այդ ժամանակաշրջանում քաղաքատնտեսությունը,—շեշտում է Մարքսը,—«իբրև պատրաստի ապրանք ներմուծվում էր Անգլիայից ու Ֆրանսիայից. քաղաքատնտեսության գերմանական պրոֆեսորները մնում էին աշակերտներ»։

Սակայն 1848 թ. հետո էլ. երբ Գերմանիան սկսեց զարգանալ կապիտալիստական եղանակով և կարծես քաղաքատնտեսության համար առկա էր արդեն կենսատու «հողը», դարձյալ Գերմանիայում չստեղծվեց բուրժուական գիտական ինքնատիպ քաղաքատնտեսություն։

Ինչո՞ւ։

Որովհետև դա այն ժամանակաշրջանն էր, երբ դասակարգային պայքարը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև արդեն սուր և սպառնալի ձևեր էր ընդունել թե՛ Անգլիայում, թե՛ Ֆրանսիայում և թե՛ Գերմանիայում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ «հնչեց բուրժուական գիտական տնտեսագիտության մահվան ժամը» և «անշահախնդիր հետազոտության տեղը բռնում են վարձկան գրչակների ճակատամարտերը, անաչառ գիտական ուսումնասիրությունները փոխարինվում են կանխակալ ու հաճոյակատար ջատագովությամբ»։

Այդ շրջանում էլ գերմանական բուրժուական քաղաքատնտեսության առաջնորդները կամ հարում են վուլգար տնտեսագիտության կարկառուն ներկայացուցիչ Բաստիային (Ֆրանսիա), կամ հետևում «անհաշտելին հաշտեցնող» Ջոն Ստյուարտ Միլլին (Անգլիա). երկու դեպքում էլ դարձյալ բուրժուական քաղաքատնտեսությունը «ներմուծվում է» Գերմանիա[6]։

Անշուշտ այստեղ խոսքը բուրժուական քաղաքատնտեսության մասին է։ Մարքսը նշում է, որ թեև Գերմանիայի զարգացման պատմական առանձնահատկությունները «բացառում են բուրժուական քաղաքատնտեսության որևէ

---

[2] Կ. Մարքս, Կապիտալ, 1 հատ., էջ 14։

[3] Նույն տեղում, էջ 11։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, էջ 13։

[6] Կ. Մարքսի այս տեսակետն է զարգացնում Ֆ. Էնգելսը 1859 թ. „Das Volk" թերթում հրատարակած իր հոդվածում՝ նվիրված Մարքսի «Քաղաքատնտեսության քննադատությունը» աշխատության։

ինքնատիպ մշակման հնարավորություն», սակայն այդ առանձնահատկությունները չեն բացառում բուրժուական քաղաքատնտեսության քննադատության հնարավորությունը Գերմանիայում։

Այսպիսով տեսնում ենք, որ Մարքսը «ազդեցություններից» և «քաղաքատնտեսության ներմուծման» պրոբլեմներին մոտենում է կոնկրետ պատմական ուսումնասիրության դիրքերից և իր այդ միակ ճիշտ և գիտական մոտեցումը ցայտուն կերպով դրսևորում է Գերմանիայի օրինակով։

Մենք հարկ համարեցինք կանգ առնել այս հարցի վրա այն պատճառով, որ հայ տնտեսագիտական միտքը, ունենալով նույնպես իր ինքնատիպ բնույթը (պայմանավորված մեր ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկություններով), կրել է իր վրա թե՛ եվրոպական և թե՛ ռուսական մտքի ազդեցությունը, մանավանդ տեսական քաղաքատնտեսության ասպարեզում։

Այս հարցում չպետք է դուրս գալ կոնկրետ պատմական վերլուծման շրջանակներից ու մեղանչել պատմական ճշմարտության դեմ։

* * *

Տնտեսագիտական մտքի բազում ձևեր իրենց արտահայտությունն են գտել, դրսևորվել են հայտնի կամ անհայտ հեղինակների աշխատություններում, երկերում, ըստ որում ոչ միայն մասնագետ տնտեսագետների աշխատություններում, այլև հրապարակախոսների ելույթներում, մամուլում, անգամ գեղարվեստագետների, գրողների, բանաստեղծների, դրամատուրգների ստեղծագործություններում։

Անկասկած, այս բոլորը կարող են աղբյուր հանդիսանալ հայ տնտեսագիտական մտքի պատմության համար, իսկ որևէ աղբյուրի վերացական կամ ապրիորի բացառումը ճիշտ չէր լինի։ Այսպես, օրինակ, վաղ կամ զարգացած ֆեոդալիզմի շրջանի հայ տնտեսագիտական մտքի պատմությունն ուսումնասիրողը զուտ տնտեսագիտական բնույթ կրող աշխատությունների բացակայության պատճառով ստիպված է դիմել պատմական, գրական-գեղարվեստական աղբյուրներին։

Իրավացիորեն օգտվելով այդ աղբյուրներից, գոհհկություն կլիներ այդ աղբյուրների հեղինակներին դասել հայ տնտեսագետների շարքում և նրանց հատուկ աշխատություններ նվիրել, օրինակ, այսպիսի խորագրով. «Արիկը՝ որպես տնտեսագետ» կամ «Ա. Աբովյանը որպես տնտեսագետ» և այլն։

Միաժամանակ, անշուշտ, ծիծաղելի կլիներ հայ տնտեսագիտական մտքի պատմության այն հետազոտողը, որը XIX—XX դարերի տնտեսագիտական միտքն ուսումնասիրելիս տնտեսագիտական գրականության համեմատական առատության առկայության պայմաններում դիմեր միայն գրական-գեղարվեստական աղբյուրներին, մեր գրողներին ու բանաստեղծներին և նրանցից հայտնի իրեն անհրաժեշտ հիմնական նյութերը։

Ինչպես տեսնում ենք, հայ տնտեսագիտական մտքի պատմության աղբյուրների հարցում ևս պետք է հայտնաբերել և կենսագործել կոնկրետ պատմական մոտեցում։

* * *

Պակաս կարևոր չէ նաև հետևյալ հարցը. ի՞նչ պետք է ներկայացնի հայ անաեսագիտական մտքի պատմությունը. տնտեսագետների կարծիքների, կոնցեպցիաների, «պորտրեթների» շարադրում և պատմություն, թե՞ տնտեսագիտական ուղղությունների և նրանց միջև գոյություն ունեցած պայքարի պատմություն:

Այս հարցի պատասխանը չի կարող սուբյեկտիվ ցանկության հետևանք, արդյունք լինել, այլ նա պայմանավորված է այդ գիտության յուրահատուկ առարկայով, բովանդակությամբ։

Տնտեսագիտության մտքի պատմության հիմքը հասարակության տնտեսակարգն է։

Մինչև սոցիալիստական հասարակական տնտեսակարգը տնտեսական հարաբերությունները ներկայացրել և արտահայտել են շահագործողների և շահագործվողների, ստրկատերերի և ստրուկների, ֆեոդալների և ճորտերի, կապիտալիստների և պրոլետարների միջև տեղի ունեցած ու ծավալված դասակարգային պայքարը։ Տնտեսագիտական գաղափարները, տնտեսագիտական մտքի տարբեր ձևերը այս կամ այն չափով դրսևորել են այդ դարավոր դասակարգային պայքարը տնտեսական հարաբերությունների ասպարեզում։

Տնտեսագիտական մտքի պատմությունն ուսումնասիրողը ոչ մի բոպե չի կարող աչքաթող անել Վ. Ի. Լենինի ուղեցույցային դրույթն այն մասին, որ «յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեկուզ չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիայի կամ թե՝ «կա երկու ազգային կուլտուրա — յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»։

Պարզ է, որ տնտեսագետներից կամ հրապարակախոսներից ոմանք ներկայացնում են դեմոկրատական, պրոգրեսիվ, ռևոլյուցիոն տարրեր, մյուսներ՝ հակադեմոկրատական, ռեակցիոն, հակառևոլյուցիոն տարրեր։

Այսպիսով ինքը, մեր գիտության օբյեկտը, թելադրում է հետազոտողին բացահայտել տնտեսագիտական ուղղությունների առկայությունը և տնտեսագետի կոնցեպցիաները վերլուծման ենթարկելուց և սպառելուց հետո սահմանել այն ուղղությունը, որին հարում է տվյալ տնտեսագետը կամ տնտեսագիտական գաղափարական մատերիալը։

Ինչպես տեսնում ենք, տնտեսագիտական մտքի պատմությանը նույնպես պետք է պատմական մոտեցում ունենալ կամ կիրառել կոնկրետ պատմական մոտեցման մեթոդը։ Դա պետք է արտահայտվի առաջին հերթին նրանում, որ տվյալ տնտեսագիտական ուղղությունը կամ տնտեսագիտական հայացքները քննարկելիս պետք է հաշվի առնվեն կոնկրետ պատմական պայմաններն իրենց առանձնահատկություններով հանդերձ։ Միայն այս պահանջի բավարարումով է, որ ճիշտ կերպով բացահայտվում է տվյալ տնտեսագիտական ուղղության կամ տեսության խաղացած պատմական դերը։ Եվ իրոք, միևնույն դասակարգի, ասենք, ֆեոդալների, տնտեսական պլատֆորմը, սրա տնտեսագիտական հիմնավորումը, տեսության credo-ն ստրկատիրական կարգերի կործանման ժամանակ ունեցավ խոշոր պատմական պրոգրեսիվ դեր,

մինչդեռ նույն այդ դասակարգի տնտեսագիտական տեսությունը ֆեոդալիզմի կործանման և կապիտալիզմի ծագման ժամանակ ունեցավ ռեակցիոն դեր և նշանակություն։ Տարբեր դեր և նշանակություն է ունեցել բուրժուական տնտեսագիտական տեսությունը կապիտալիզմի «ծննդյան» ժամանակ (պրոգրեսիվ դեր և նշանակություն) և կապիտալիստական սիստեմի իմպերիալիզի և ընդհանուր ճգնաժամի դարաշրջանում (ռեակցիոն դեր և նշանակություն)։

Այդ նույն կոնկրետ պատմական մոտեցումը թելադրում և պայմանավորում է որևէ տնտեսագիտական ուղղության և տնտեսագետի գնահատման չափանիշը։ Այս հարցի կապակցությամբ մենք զինված ենք Լենինի հայտնի դուցումով.

«Պատմական ծառայությունների մասին դատում են ո՛չ թե նրանով, թե ինչ չեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ի՛նչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»[7]։

Պետք է շեշտել, որ Լենինի այս իմաստալից դրույթից բխում է ո՛չ միայն այն, որ անթույլատրելի է, հակագիտական է, հակամարքսիստական է ժամանակակից պահանջների չափանիշով մոտենալ պատմական անցյալի գործիչներին, դրանց թվում հարկավ նաև տնտեսագետներին, այլև այն, որ չի կարելի նրանց նկատմամբ կիրառել կամ առաջադրել նրանց անմիջական հաջորդող շրջանի պահանջները։

Այդ կոնկրետ պատմական մոտեցման արտահայտությունն է նաև այն, որ տնտեսագիտական մտքի պատմությունը հանդես է գալիս, որպես տնտեսագիտական գաղափարների, ուղղությունների պայքարի պատմություն, ուղղություններ, որոնց հետևը «թաքնված են» հակադիր շահեր ունեցող դասակարգերը կամ թե այդ դասակարգերի այս կամ այն հասարակական շերտերը։

Մեզ համար պատմականորեն հաստատված ճշմարտություն է այն դրույթը, թե բոլոր հասարակական գիտությունները, ներառյալ անշուշտ տնտեսագիտական մտքի պատմությունը, դասակարգային բնույթ ունեն և արտահայտում ու պաշտպանում են այս կամ այն դասակարգի շահերը։ Այստեղից բնավ չի բխում և արդարացվում այն գոեհկացված մտայնությունը, իբր թե բավական է տվյալ տնտեսագիտական գաղափարին, տեսությանը, տնտեսագետին դրոշմել դասակարգային պիտակը և հարցը լուծված կարելի է համարել։ Հասարակական-տնտեսական կյանքը, նրա անդրադարձումը և մշակումը, որպես գաղափարական մատերիալ, շատ ավելի բարդ է, քան պատկերացնում է հասարակացման ջատագովը։

Նախ և առաջ՝ իրականում «մաքուր» տնտեսակարգ, միայն երկու դասակարգով պատմության մեջ գոյություն չի ունեցել։ Գերակշռող, գլխավոր, հասարակական կարգը պայմանավորող, որոշող դասակարգերի կողքին գոյություն են ունեցել կամ անցյալից «ժառանգած» դասակարգերի մնացորդները, կամ թե հասարակական շերտեր, որոնք ապագա դասակարգերի սաղմերն են հանդիսանում։ Օրինակ, ստրկատիրական հասարակակարգում՝ ազատ գյուղա-

---

[7] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 229։

ցիների, արհեստավորների, վաճառականների առկայությունը, ֆեոդալիզմի շրջանում՝ նույնը և այլն։

Եվ ապա, շնորհիվ պատմական զարգացման առանձնահատկությունների յուրաքանչյուր դասակարգ իր մեջ պարունակում է առանձին խավեր, շերտեր, որոնց որոշ շահերը մասնակի հարցերում չեն համընկնում դասակարգի մեծամասնության շահերին։ Օրինակ, կալվածատերերի այն մասը, որը վերասերվում էր որպես ձեռնարկատեր-կապիտալիստ, այլ շահեր ուներ, քան ֆեոդալ դասակարգը ամբողջովին, թեև որպես շահագործողներ, բոլորն էլ ունեին ընդհանուր շահեր։

Տնտեսագիտական բազմազան գաղափարների, ուղղությունների պայքարի կոնկրետ պատմական ընթացքը անհրաժեշտորեն թելադրում է տնտեսագիտության մտքի պատմությունն ուսումնասիրողին բացահայտել, թե տվյալ տնտեսագետի արտահայտած, պաշտպանած գաղափարը, տեսակետը, տեսությունը հասարակական որ շերտի, խավի շահերն է արտահայտում և պաշտպանում մղվող դասակարգային պայքարում։

* * *

Ինչպես հիշատակել ենք վերը, հայ տնտեսագիտական մտքի պատմության պերիոդիզացիան հատուկ քննության առարկա է դարձել 1953 թ. տնտեսագետների Անդրկովկասյան խորհրդակցության կողմից, որը կազմակերպել էր ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի այն ժամանակ Տնտեսագիտության ինստիտուտը։

Այդ պերիոդիզացիայի սկզբունքները, որ առաջին անգամ մեր տնտեսագիտական գրականության մեջ մշակել է պրոֆ. Ս. Զուրաբյանը, ներկայացվել էին խորհրդակցության և որոշ ճշտումներով հավանություն ստացել խորհրդակցությանը մասնակցող տնտեսագետների կողմից։

Տնտեսագիտական մտքի պատմության պերիոդիզացիայի հիմքում դրված է հասարակական տնտեսական ֆորմացիան։

Գիտությունը, մարդկությունը Մարքսին և Էնգելսին են պարտական այն բանի համար, որ պատմական պրոցեսը ոչ թե որպես տարերք ներկայացվեց, այլ որպես որոշ «սիստեմ», որպես օրինաչափ զարգացում, ենթակա օրենքների, ենթակա բնական-պատմական անխուսափելիության։

Ինչպես ողջ պատմական պրոցեսն է ներկայացնում հասարակական-տնտեսական ֆորմացիաների (նախնադարյան համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական, կոմունիստական ֆորմացիաները) հաջորդական դարաշրջաններ, այնպես էլ տնտեսագիտական մտքի պատմությունը սահմանազատվում է այդ դարաշրջանում։

Պատմական ճշմարտություն է, նախ՝ որ մի դարաշրջան կամ մեկ հասարակական-տնտեսական ֆորմացիա մյուս ֆորմացիայից չի բաժանված անանցանելի վիհով. գոյություն են ունեցել մի հասարակական-տնտեսական ֆորմացիայից մյուս հասարակական-տնտեսական ֆորմացիայի անցման շրջաններ, իրենց հատուկ հակասություններով և դասակարգային պայքարի սրումով։ Բացի այդ, անգամ միևնույն հասարակական-տնտեսական ֆորմացիայի կամ դարաշրջանի սահմաններում զարգացման այնպիսի էտապներ են լինում, որոնք նույնպես յուրահատուկ են այդ էտապին և որոնք շրջադարձային դեր են խաղացել տնտեսագիտական մտքի պատմության մեջ

Այսպես, օրինակ՝ XIX դարը Ռուսաստանում նոր ֆորմացիայի՝ կապիտալիստական ֆորմացիայի սկզբնավորման և հետագա զարգացման դարաշրջան էր։ Սակայն այդ դարաշրջանում տեղի ունեցավ այնպիսի պատմական ակտ, ինչպիսին 1861 թ. փետրվարի 19-ի ակտը (Վրաստանում՝ 1864 թ., Հայաստանում և Ադրբեջանում՝ 1870 թ.), որն առաջ բերեց այդ ռեֆորմին վերաբերող շատ մեծ տնտեսագիտական գրականություն։

Եվ իրավամբ՝ թե՛ ռուս և թե՛ հայ տնտեսագիտական մտքի պատմությունը պետք է այդ դարաշրջանում բաժանել երկու էտապների՝ տնտեսագիտական մտքի զարգացումը նախքան գյուղացիական ռեֆորմը և գյուղացիական ռեֆորմից հետո։

Այսպիսով տնտեսագիտական մտքի պատմության պերիոդիզացիան նույնպես կոնկրետ պատմական բնույթ է ստանում և իրոք որ արտահայտում է տնտեսական հարաբերությունների կոնկրետ պատմական պրոցեսը և այդ պրոցեսին համընթաց տնտեսագիտական գաղափարների, ուղղությունների պայքարի պատմական ընթացքը։

* * *

Մենք նշեցինք, որ հայ տնտեսագիտական մտքի պատմության հիմնումը հնարավոր էր միայն այն խոշոր ու քրտնաջան բազում հետազոտությունների, ուսումնասիրությունների շնորհիվ, որոնք կատարեցին սովետական մարքսիստ տնտեսագետները, պատմաբանները, փիլիսոփաները, գրականագետները, լեզվաբանները և ուրիշներ։

Այս կապակցությամբ արժե մեջ բերել Ստեփան Շահումյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Հայ ազգային բռնակալության», հայ ժողովրդի ոխերիմ թշնամու, դաշնակցության պարտիայի տեսաբաններից մեկի՝ Միքայել Վարանդյանի խոստովանությունը, որ նա շարադրել է դաշնակցության հիմնադրումից շուրջ 22 տարի հետո՝ 1912 թ. իր «Վերածնված հայրենիքը և մեր դերը» աշխատության մեջ։ «Ցավ է հիշատակել,—գրում է նա,—որ 50 տարուց ի վեր հեղափոխական կուսակցությունները չեն կատարել մի հատիկ լուրջ հետազոտություն այն տնտեսական և ցեղային միջավայրի մասին, ուր խաղացվել է հայկական կռիվն ու ողբերգությունը։ Մենք չունենք գեթ մի հատիկ լուրջ գործ հարկատվության սիստեմի կամ սիստեմների մասին հին ռեժիմի տակ, չունենք ոչինչ և հողային ու արհեստային վիճակների մասին, այլև այլ ժողովուրդների պարապմունքի, համայնական կենցաղի, դասակարգայ ն շերտավորումների մասին» և այլն։

Եվ այս մարդիկ, որոնք 22 տարվա ընթացքում իրենց իսկ խոստովանությամբ չեն կատարել մի հատիկ լուրջ տնտեսագիտական հետազոտություն, չեն տվել «գեթ մի հատիկ լուրջ գործ հարկատվության սիստեմի մասին» և այլն, հավակնություն ունեին իրենց համարելու հայ ժողովրդի «միակ հարազատ կուսակցությունը» և ամբարտավանություն ունեին ձգտելու տնօրինել այդ ժողովրդի բախտը։

Սոցիալիստական վերածնունդ ապրող հայ ժողովրդի միակ ղեկավար՝ Կոմունիստական պարտիայի և հայ սովետական մարքսիստ գիտնականների ջանքերի շնորհիվ մենք այսօր ունենք ոչ միայն մի քանի տասնյակ լուրջ գործեր, մենագրություններ, հետազոտություններ, ուսումնասիրություններ՝ նվիրված մեր ժողովրդի տնտեսական զարգացման պատմությանը, գաղափա-

բական հոսանքների պատմությանը, այլև այդ աշխատությունների հիման վրա մեր տնտեսագետները նվաճել են սոցիալական գիտությունների մի նոր բարձունք—հիմնել են «Հայ տնտեսագիտության մտքի պատմությունը»։

Ինչպես նշեցինք իր տեղում, արդեն հրապարակի վրա է պրոֆ. Ա. Ռ. Գուլանյանի «Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության» արժեքավոր աշխատությունը, որն ընդգրկում է XVIII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի 90-ական թվականների ժամանակաշրջանը։ Նույն պատմական շրջանի հայ տնտեսագիտական մտքի զարգացմանն է նվիրված պրոֆ. Ս. Զուրաբյանի հրատարակվելիք աշխատությունը։

Հիշյալ գիտնականների, ինչպես նաև ուրիշ գիտական աշխատակիցների ջանքերով շարունակվում է հայ տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրությունը, որն ընդգրկում է մի կողմից հին դարերից մինչև XVIII դարի երկրորդ կեսը և մյուս կողմից XIX դարի 90-ական թվականներից մինչև մեր օրերը։ Այս հետազոտությունները պետք է ավարտվեն առաջիկա յոթնամյակում, պսակվեն հայ տնտեսագիտական մտքի պատմության երեք հատորյակի հրատարակությամբ։

Այս ծավալուն աշխատանքի իրականացումը կլինի վառ արտահայտություններից մեկը՝ սովետական ժողովուրդների միասնական ընտանիքի հարազատ եղբոր՝ հայ ժողովրդի՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց ծաղկման ու նրա հետագա զարգացման։